

## ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈՒՈՎՆԵՐԸ

Քանի՞ հոլով ունի մեր արևելեան աշխարհաբարը: Պալատանեանը գրում է. «Հայերէն լեզուի հոլովները եօթն են — Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական, Գործիական և Ներգոյական»: Մենք մեր «Աշխարհաբարի քերականութեան» մէջ հինգ հոլով ենք դրած՝ ուղղական, արական, բացառական, գործիական և ներգոյական իսկ «Տարրական քերականութեան» մէջ բացի վերոյիշեալներէց և սեռական: Ճիշտ համարում ենք առաջինը, այսինքն հինգ հոլով առանց հայցականի և սեռականի: Եթէ «Տարր. քերականութեան» մէջ վերցրել ենք սեռականը, այդ արել ենք գլխաւորապէս այն պատճառով, որ մտածել ենք, թէ ոչ մի ուսումնք այնպէս աւանդապատճէ, ինչպէս քերականութիւնը, — վարժապետների համար դժուար կը լինէր առանց սեռականի ատենել մի քերականութիւն, որովհետեւ ըստ երևութիւն կան սեռականի մնացորդներ հայերէնում: Իսկ հայցականը ոչ մի դէպքում հարկ չկայ հոլովների շարքի մէջ մտցնել:

1) Մենք չենք սխալուած. այդ մասին լսել ենք մի երկու վարժապետից, Վերջերս էլ Քիֆիսից մի հայերէնի ուսուցիչ յատկապէս գրել էր հետեւեալը, որ աւելորդ չի լինիլ դնել այստեղ. «Կնձ Թում է Թէ կարիք կայ Ձեր «Տարրական քերականութեան» մասին մի բացատրական գրոյցի՝ լրացրի կամ դասախօսութեան միջոցով, որպէս զի ծխական ուսումնարանների ուսուցիչների համար անհասկանալի կամ տարօրինակ չլինին զրբի մէջ եղած մի բանի նորութիւնները, Շատերը որ սովորած են հին քերականութիւններին, ուղղակի դժուարանում են օր. հինգ հոլով ընդունելու կամ Ձեր բացատրած ստորոգեալը հասկանալու: Կաւ կը լինէր, որ օր. Ծննդեան տօներին Քիֆիսի ուսուցիչների համար այստեղ գրոյցներ կազմէիր» ... — Զրոյցներն անշուշտ պիտանի կը լինէին. բայց զրանից առաջ պէտք էր իմանալ Թէ ուսուցիչներն ինչն են դժուարանում ընդունել եւ ինչու: Գծրախտաբար մեր հրատարակած քերականութիւնների համար մինչեւ այժմ չեղան քննադատութիւններ, Եզան այժմ զրախօսութիւններ, բայց քննարկութեամբ այնպիսիք, որ չիմացանք ուրիշների կարծիքը: Մենք հայոց լեզուի քերականութեան համար ունինք մի ընդարձակ ուսումնասիրութիւն, որը հրատարակելուց առաջ ուզում էինք ուրիշների հախացքն իմանալ, որպէս զի թերի չլինի, Այժմ այստեղ դնում ենք այդ աշխատութիւնից մեր նամակագրին հեաարբրած մի կէտի. հոլովների մասին:

Տեսնենք այս խնդիրը, որ կարծում ենք հայոց շեղուի վար-  
ժապետների համար անհետաքրքիր չի լինիլ, քանի որ հայերէնի  
քերականութիւնն ևս կայ մեր դպրոցների ուսման ծրագրի մէջ:

Ի՞նչ է հոլով ասածը, — եթէ ոչ հոլովելի բառերի զանա-  
զան ձեւերը (Form), որ կազմում են մեծ մասամբ հոլովական  
վերջաւորութիւններով: Այդ ձեւերը ցոյց են տալիս զանազան  
կախման յարաբերութիւններ՝ տեղի, ժամանակի, պատճառի  
ևլն, որոնց իմաստով՝ անունն ու դերանունը խօսքի մէջ կարգ-  
ւում են մի ուրիշ բառի հետ: Արդ հոլովների մասին սովորեց-  
նել կը նշանակէ երկու բան սովորեցնել. նախ՝ թէ արուած  
բառը քանի տեսակ ձև կամ հոլով կարող է ունենալ և որոնք  
են այդ ձևերը, և երկրորդ՝ թէ ամեն ձև կամ հոլով ինչպիսի  
և քանի տեսակ կախման յարաբերութիւն կարող է ցոյց տալ  
խօսքի կապակցութեան մէջ. ուրիշ խօսքով որոնք են այս կամ  
այն հոլովի գործածութիւնները, որոյհետև ամեն հոլով միայն  
մի տեսակ յարաբերութիւն չի ցոյց տալիս, այլ մի քանի, եր-  
բման և շատ: Հոլովների ուսմունքի այս երկրորդ մասը, կամ  
ինչպէս սովորաբար ասում են, հոլովների կիրառութիւնը, մշտ-  
նում է շարահիւսութեան (սինտաքսիս) մէջ և տեղ չէր կորոզ  
գտնել մի «ճարրական քերականութեան» մէջ, ինչպիսին է մերը:  
Մի երկու տեղ միայն մենք այդ մասին յիշատակութիւն ենք  
արել, և ներքում կը բացատրենք թէ այդ էլ ինչու համար:  
Մտում է ուրեմն միայն առաջինը:

Այսպէս ուրեմն մի ճարրական քերականութեամբ մայրե-  
նի լեզուի հոլովելը սովորեցնել կը նշանակէ միայն ուշադրու-  
թիւն դարձնել տալ այն բոլոր ձևերի, կամ ինչպէս սովորա-  
բար ասում են, փոփոխութիւնների վրայ, որ կարող են ու-  
նենալ հոլովելի բառերը, որ աշխարհաբարում գոյական անունն  
ու դերանունն են. թէ չէ էլ ուրիշ ոչ մի խորհուրդ ու նպա-  
տակ չունի երեխային կրկնել տալ՝ քաղաք, քաղաքի, քաղաքից,  
քաղաքով ևլն: Մեր «ճարրական քերականութեան» մէջ հետե-  
ւելով այս սկզբունքին՝ Գոյական անունն ուսման մէջ «Անուն  
հոլովումը» վերնագրի տակ դրել ենք. «Անունները նայելով թէ  
խօսքի մէջ ինչպիսի պաշտօն ունին՝ զանազան ձևերով փոփոխ-  
ւում են: Օրինակ՝

Ես գնացի պարսկոյ:

Պարսկոյի դուռը բաց էր:

Ես գուրս եկայ պարսկոյից:

Ես անցայ պարսկոյով:

Պարսկում շատ ծառեր կային:

Մի անուան հոլովել նշանակում է ասել այն բոլոր ձևերը կամ փոփոխութիւնները, որ կարող է ունենալ անունը:

Հոլովները հինգ են<sup>1)</sup>, այսինքն ամեն անուն կարող է փոփոխել հինգ ձևով, որ կոչւում են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական» (եր. 33—34): Անուան հոլովներն ուրեմն մենք բացատրել ենք իբրև անուան ձևեր:

Արդ որ կողմը շուռ տանք, մեր անուններն ունին միայն հինգ ձև և ոչ աւելի: Մեր անունների առաջին ձևն է ուղղական հոլովը, որ իւր կոչումով այն չէ, ինչ որ ուրիշ լեզուների nominatif, именительный—անուանական ասածը. այլ նայն է ինչ որ casus recti, прямой падежъ, որի տակ բոլոր քերականները հասկանում են именительный և звательный (=կոչական) հոլովները. դա անուան ուղիղ, անփոփոխ ձևն է. և ամեն անուն ուղիղ ձևով՝ ուղղական հոլովով է՝ բառիս բուն նշանակութեամբ: Ապա մենք ունինք ուրիշ չորս ձևեր, որոնք թեք հոլով են (casus obliqui, косвенный падежъ) և կազմւում են վերջաւորութիւններով՝ բացառականը՝ ից, գործիականը՝ ով, ներգոյականը՝ ում, և մի հոլով, որ՝ մի կողմ թողնելով սեռական կամ տրական կոչման հարցը, ունի եօթ տեսակ կազմութիւն: Էլ ուրիշ ոչ մի ձև չկայ անունների համար:

Եթէ մեր նպատակն է երեխային՝ հոլովելով զգալ տալ իւր խօսած լեզուի մէջ անունների և դերանունների ձևերը, ապա ուրեմն նա պիտի իմանայ, որ հայոց լեզուի մէջ գոյական անունները հինգ ձև, որ է հինգ հոլով ունին: Եւ այս պիտի շեշտուի նրան: Երեխայի համար հոլովում ասածը մտթ ու անհասկանալի է մնում, նա գլխի չի ընկնում թէ հոլովել նշանակում է ձևերն ասել, երբ նրան տարբեր տարբեր անունների տակ կրկնել ենք տալիս նոյն ձևերը՝ ուղղական հաց, կոչական հաց, հայցական հաց, սեռական հացի, տրական հացի,—և այսպէս բոլոր անունները: Միշտ միայն հինգ ձև ենք ասել տալիս նրան, որովհետև աւելին չկայ, ըստ ութ անուան տակ: Ինչո՞ւ: Զեարանութեան մէջ միայն ձևի հետ պիտի գործ ունենայ աշակերտը և ձևերը կրկնելիս գործ չպիտի ունենայ այդ ձևերի

1) Ուշադրութիւն պիտի դարձնել, որ անուան հոլովման մասին է խնդիրը. եւ ոչ թէ ընդհանրապէս հոլովման մասին: Այս դէպքում փոքր ինչ տարբեր ձևով կր խմբադրուէր այս հատուածը. այն է «անուն» բառի կողքին պիտի աւելանային «եւ դերանուն» բառերը. եւ ապա թէ «հոլովները վեց են, այսինքն անուններն ու դերանունները կարող են փոխփոխուել վեց ձևով. որ կոչւում են՝ ուղղական, սեռական, տրական» եւ ըն-

կիրառութեան հետ, որ, ինչպէս ասացինք, շարահիւսութեան նիւթն է: Եւ ի՞նչ է աւելանում աշակերտին, երբ նա ձեերը սովորելիս կրկնում է ուղղական՝ հաց, հայցական՝ հաց: Արդեօք սովորում է տարբերել հայցականն ուղղականից: Բնա՛ւ ոչ: Եւ չի էլ կարող այդ լինել, քանի որ հայցական հոլով չունինք:

### Հայցական հոլով

Կարո՞ղ է լինել մի հոլով առանց իրեն յատուկ հոլովական ձևի: Եթէ գրաբարում ուղղական տունք, հայցական տունք է լինում, կայ ուրեմն և հայցական հոլով: Ռուսերէնում արական և չեղոք անունների հայցականը նման է ուղղականին կամ սեռականին, բայց կայ և իգական անունների և ածականների ահագին շարքը, որոնք հայցականի համար առանձին ձև ունին, — КНИГА, КНИГУ: Նոյնպէս և գերմաներէնում արական անուններն ու ածականներն ունին առանձին ձև հայցականի համար՝ den kleinen: Ո՞րն է մեր աշխարհաբարում հայցականի առանձին ձևը: Ինչքան էլ որոնէք, չէք գտնիլ: Մեր հայցական ասածը միտք նման է կամ ուղղականին, կամ տրականին: Սպա ուրեմն էլ ի՞նչպէս կարող է մեր լեզուի մէջ առանձին հայցական հոլով գոյութիւն ունենալ: Այս այնպիսի պարզ ըմբ է, որ զարմանալի է թէ ինչպէս մեր քերականները մինչև այսօր աշխարհաբարի համար պահել են այդ հոլովը: Հարկաւ, շատ տարօրինակ է թւում նրանց, որ գրաբարի և օտար լեզուների քերականութիւններին վարժուած են, չտեսնել մեր քերականութեան մէջ հայցական հոլով: Բայց այդպէս է:

Նոյնպէս չկայ մեր լեզուի մէջ և կոչական հոլով, միևնոյն ուղղականը գործ է ածւում իբրև կոչական, երբ խօսքը մէկին է ուղղւում: Բայց անշուշտ կոչական հոլովի դուրս ձգելը խորթ չի թւում մեր վարժապետներին,— ուրիշներն արդէն այդ հոլովը մերժել են: Մեր հին քերականներն առհասարակ շատ առատաւէր են եղել հոլովների նկատմամբ՝ հայերէնում (գրաբարում) տասը, նոյն իսկ տասն և մէկ հոլով դնելով, որով հայոց լեզուն աշխարհի մէջ հոլովներով ամենից հարուստ լեզուն է համարուել: Դրանց դէմ իրաւամբ գրում է Ա. Բագրատունին. «Ոմանք յօտարազգեաց սաեղծին, և ի մերոց անըննաբար առեալ ոմանց եղին այլ ևս չորս հոլովս, պատական, պատական, ցերգոյական, կոչական: Բայց առաջին երեքն ի դոցանէ՛ չեն զատ հոլով, ոչ ըստ նշանակութեան և ոչ ըստ կազմութեան . . . . իսկ զկոչականն թէպէտ յիշատակեն նախնիք ըստ

հարկի յունին ի քերականութեան թրակայւոյն՝ քայց զհոլովոսն վեց ասելով՝ ընդ գործիականին առեալ յայտնապէս զքաղաքականն մեր, այնու իսկ ակնարկեն իմն ապախտ զկոչականն համարել ի մեզ զի և չունի ինչ բնաւ ի մեզ փոփոխումն կազմութեան ըստ յունին, այլ նոյն ինքն ուղղականն է՝ կոչմամբ ասացեալ: Ապա անհիմն է ամենևին այդ ամենայն եկամուտ շինուած չորից հոլովիցդ, և աւելորդ ծանրաբեռնութիւն ուսանողաց, յայտմ հետէ մերժելի իսպառ յամենայն ուղղատես և անաչառ վարժապետաց և ի քերականաց<sup>1)</sup>: Արիչ տեղ էլ Բագրատունին կոչականը համարում է ուղղական հոլովի մի գործածութիւնը միայն:

Բագրատունու այս պարզ հասկացողութիւնը, որով հոլով ըստ կազմութեան և հոլովի գործածութիւն տարբերում են, չունի Այտնեանը: Սա գրաբարի համար 2) դնում է «գլխաւոր և երկրորդական հոլովներ»: Նրա գլխաւոր հոլովներն եօթն են՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, քայքայական, գործիական և ներգոյական. իսկ երկրորդական հոլովներն երեք են՝ պատմական, պարտական և կոչական: Այս երկրորդ կարգի մէջ անշուշտ պիտի մտնէր և ներգոյականը, քանի որ ինչպէս պէտք է կարծել, նա այս բաժանումն արած է այն նպատակով, որ ցոյց տրուի թէ այս երկրորդական կոչած հոլովներն իսկական հոլովներ չեն: Այտնեանն աշխարհաբարի (արեւմտեան) քերականութեան մէջ 3) դնում է վեց հոլով՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, քայքայական, գործիական: Բայց յետոյ աւելացնում է և մի շարք «աննախդիր հոլովներ», «աննախդիր տրական», «աննախդիր ներգոյական», «աննախդիր քայքայական», որոնք «Ուղղականի ձևով», կամ «տրականի ձևով» են, և ապա թէ «կայ կոչական ասուած հոլով մ'ալ, որ նոյնպէս ճիշտ ուղղականի կրնամանի. և անուն մը կոչելով (կամ իրեն կանչելով) կանուանէ . . . կոչականն աննախդիր հոլով չէ. միայն թէ սորվողն աղէկ միտք առնելու է որ ուղղական չկարծէ»: Այտնեանն ուրեմն աստանուում է հոլովական ձևի և կիրառութեան մէջ, մերթ ձևն է իրրև հիմք վերցնում հոլովի, մերթ կիրառութիւնը: Այս շփոթ դրութիւնը նա պարզում է Վ. Զարեանի (գրաբարի) քերականութեան իր մշակած հրատարակ-

1) Ա. Բագրատունի. Քերական. ի պէտս Զարգացելոց. եր. 7.

2) Այտնեան. Քերականութիւն աշխարհ. կամ արդի հայերէն լեզուի. Վիեննա 1867. եր. 215 հետ.

3) Նոյն. եր. 4. 15.

կութեան մէջ մի ծանօթութիւն դնելով<sup>1)</sup>։ «Ճիշդ խօսելով՝ պատմական, պարստական, ներգոյական և կոչական հորովները գրաւ հորովներ չեն, այլ պատմականը բացառականին վրայ, պարստականը գործիականին վրայ զ դնելով կը ձևանայ, և ներգոյականը տրականին վրայ ի դնելով, իսկ ուղղականէն յառաջ ո՛վ աւելցընելով (կամ նաև տաանց ուլի կոչելով) կըլլայ կոչական»։

Կոչական հորովին նոյն տեղն է տալիս և Պալասանեանը, որ հայերէնի (արևելեան աշխարհ) հորովները եօթն է գնում և ուղղական հորովի մասին խօսելիս՝ միայն աւելացնում է. «Ուղղականի նման է կոչական ատած հորովը, որ մի և նոյն հարցերին է պատասխանում (ո՞վ, ի՞նչ) և միայն նշանակութեամբ է զանազանում նորանից. այդինքն եթէ ուղղականի ձևով բառը նախադասութեան մէջ ոչ ենթակայ է և ոչ ստորոգեալ, կոչական բառ է»<sup>2)</sup>։ Պալասանեանը մոռանում է ուղղականի իբրև վերագիր գործածութիւնը՝ Վարդան զօրավարը, Վարդան զօրավարին, Վարդան զօրավարից ելն, որոնց մէջ Վարդան է հարկէ հայցական չէ, այլ ուղղական։

Նորագոյն քերականները, ինչպէս Սա. Մալխասեան, Չապէլ Է. Ասատուր, և ուրիշներ կամ ընդունովին անտես են անում կոչական հորովը չառնելով հորովների մէջ, կամ պարզապէս կոչականն ուղղականի գործածութիւններից մէկն են համարում. «Ուղղական հորովը կը գործածուի... իբր կոչական»։<sup>3)</sup>

Այսպէս ուրեմն կոչական հորովը յունարէնի և լատիներէնի ազդեցութեամբ է մտած մեր քերականութիւնների մէջ։ Պրովհետև յունարէնում կայ առանձին ձև, առանձին հորով կոչական, ուստի և հայերէնում պիտի լինէր։ Բայց վերջապէս մեր քերականները տարբերելով հորովի կազմութիւնը նրա նշանա-

1) Վրթ. Չալքիեան Գերականութիւն հայի. լեզուի աշխատասիրեալ ի Է. Ա. վ. Այանեան. Վիեննա 1885. եր. 40.

2) Ս. Պալասանեան Գերակ. Մայրենի լեզուի չորրորդ Տիպ. Տրփիսիս. 1894. եր. 44 հտ.

3) Չապէլ. Է. Ասատուր. Գործն. Գեր. արդի աշխարհարարի. Կ. Պօլիս 1902. եր. 107. Այս բերականը սակայն որի համար մեծ է «Այտնեանի հեղինակութիւնը», վերջինիս ազդեցութեամբ մոռանալով որ մի երկու երես առաջ կոչականը իբրև ուղղականի գործածութիւններից մէկն է դրել. ինչպէս ենթական, ստորոգեալը, բացայայտիչն են. եր. 110. գրում է թէ «կոչականը յատուկ հորով մըն է, որ ուղղականի եւ հայցականի (?) ձեւը ունի», իսկ եր. 88 զարձեալ կոչական վրայ՝ հորովները վեց դնելով.

կութիւննից կամ կերպաութիւննից, տեսնում են, որ մենք իսկապէս զատ կոչական հոլով չունինք. այլ նոյն ինքն ուղղականն է՝ կոչմամբ ասացեալ»։ Այս պատճառով կոչական հոլովը կամ կողմնակի կերպով է յիշուում, կամ դուրս է ձգուում հոլովների շարքի միջից և կամ ուղղականի գործածութիւններից մէկը համարուում։ Սակայն հոլովի այս ըստ ձևի կամ կազմութեան ըմբռնումը, որ Բագրատունուց սկսուում է գրաբարի կոչականի համար և գրաբարից առանց գծուարութեան անցնում է աշխարհաբարին, չի անցնում և աշխարհաբարի միւս հոլովների վրայ, որ ձևով նոյն են։ Այսպէս Պալատանեանը կոչականը դուրս է ձգում, բայց հայցականը պահում է, թէպէտև աւելացնում է, թէ «սովորական հոլովման մէջ հայցականը ուղղականի նման է և արականը սեռականի նման»։<sup>1)</sup> Նւ նա իւր «Մայրենի լեզուի քերականութեան» մէջ (Եր. 46) այդ մասին խօսելով գրում է. «Այս նոյնավերջ հոլովները միմիանցից որոշելու մի հնարք կայ— քննել թէ նոցանից իւրաքանչիւրը ինչ պաշտօն է վարում և ինչ մաքով է նախադասութեան մէջ»։ Ուրեմն ձևի կամ կազմութեան կատարեալ նոյնացում է, տարբերութիւնը միայն շարահիւստական է։ Բայց Պալատանեանը եթէ հետևողական վարուէր, պէտք է այդ ասելուց յետոյ, ինչպէս կոչականի համար է արել, հայցական հոլովը, ինչպէս և սեռական կամ արական հոլովներից մէկն ու մէկը, չառնէր հոլովների շարքի մէջ. քանի որ նա հոլով սահմանում է իբրև գոյական անունների վերջաւորութեան փոփոխութիւն (Եր. 44), իսկ այդ՝ իբրև տարբեր հոլովներ գրածները «նոյնավերջ» են, կամ դրանց համար «միևնոյն վերջաւորութիւններն են գործածուում»։

Այսպէս ուրեմն աշխարհաբարում ինչպէս կոչական հոլով չկայ, նոյնպէս հայցական հոլով ըստ ձևի կամ կազմութեան չկայ։ Բայց կոչական չլինելու հետ հաշուում են մեր վարժապետները, իսկ հայցական չլինելը անհասկանալի է նրանց։

Հապա «ներգործական բայերի հայցական սեռի խնդիրը, մի՞թէ դա հայցական հոլովով չի դրւում», կրթացադանչեն դուցէ շատերը։ Այդպիսիներին այս կասենք, որ դրանք հոլով և հոլովի պաշտօն, հոլովական ձև և այդ ձևի շարահիւստական նշանակութիւն, շփոթում են իրար հետ,— մի բան որ որոշ կերպով պիտի տարբերել իրարուց։ «ներգործական բայերի սեռի խնդիրը»

1) Ընդհ. տեսութիւն արեւելեան նոր դրաւոր լեզուի հայոց. Թիֆլիս. 1870. եր. 23.

դիրը» մեր աշխարհաբարի մէջ դրւում է կամ ուղղական կամ արական հոլովով, հէնց այդ պատճառով հոլովները շարքի մէջ հայցականն իբրև առանձին հոլով գնողները ստիպուած են առել թէ այս հոլովը նման է միշտ կամ ուղղականին կամ արականին: Շատ խորթ է հնչում լսել՝ ներգործական բայի սեռի խնդիր և ուղղական հոլով: Բայց այդ խորթութիւնը միայն անվարժութիւնից է առաջանում: Մենք սովորած ենք լսել թէ միայն ենթական և ստորոգեալն են դրւում ուղղական հոլովով, իսկ «սեռի խնդիրն» ու պարագայական խնդիրները դրւում են հայցական հոլովով: Այո՛, սովորած ենք, որովհետև մենք վարժուել ենք գրաբարի կամ օտար լեզուների քերականութիւններին. թէպէտև գրաբարում, պէտք է ասել, որոշ պարագայական խնդիրներ երբեմն և ուղղական են դրւում:

Մի ֆրանսիացու համար, օրինակ, շատ բնական է, որ ենթական և ներգործական բայերի սեռի խնդիրը դրւում են բառի մի և նոյն անփոփոխ ձևով, մի ձև, որ նոյն իսկ հոլով էլ չի կոչւում, le loup mange l'agneau. բայց մենք երբ առում ենք՝ ջուր չկայ, —նա ջուր խմեց, —առաջին դէպքում՝ ջուր ենթական է, ուրեմն և ուղղական հոլով պիտի լինի (գոնէ ասէինք անուանական հոլով), իսկ երկրորդ դէպքում ջուր «սեռի խնդիր» է, ուրեմն և հայցական: Ինչո՞ւ, չէ՞ որ երկու դէպքում էլ այդ բառը ուղիղ ձևով, այսինքն ուղղական է բառի բուն իմաստով, և ջուր ձևն իբրև ուղղական և հայցական տարբերում ենք ոչ թէ ձևով, այլ շարահիւստական արժէքով: Ֆրանսերէնի քերականութիւնների մէջ միշտ անգամ հոլով բառն էլ չէք գտնիլ, —և ֆրանսերէնն իրօք չունի հոլովում. — բայց չէ՞ որ նոյն հիմունքով կարելի էր գնել ուղղական — nominatif, հայցական և կոչական հոլովներ և մի և նոյն բառը մի և նոյն ձևով՝ նայելով պաշտօնին ուղղական անուանել կամ հայցական ու կոչական հոլով: Le loup mange l'agneau խօսքի մէջ ուրեմն le loup կարող էր ասուել ուղղական է, որովհետև ենթական է. իսկ l'agneau հայցական հոլով, որովհետև «սեռի խնդիր» է: Բայց ֆրանսիացին այդ չէ անում: \*): Նա տարբերում է բառի ձև և շարահիւստական արժէք:

\_\_\_\_\_

\*) Օտարների, օրինակ՝ գերմանացու համար յօրինուած ֆրանսերէնի ու անգլերէնի քերականութիւնների մէջ դրւում են հոլովներ՝ ուղղական, սեռական, տրական եւ հայցական (որովհետև այս հոլովները կան գերմաներէնում), ասելով թէ հայցականը նման է — ուղղականին եւ թէ սեռականն ու տրականը կազմում են à եւ de նախդիրներով: Բայց այս միայն գործնական նշանակութիւն ունի, գերմանացի աշակերտն այդ



Նա ընաւ ուշադրութիւն չի դարձնում, որ իւր հին ֆրանսերէնը ունեցել է երկու հոլով, ուղղական՝ ենթակայի համար և հայցական՝ «սեռի խնդրի» համար. նրա արդի լեզուի մէջ այդ երկու ձևից մէկն է մնում և այդ մի ձևը տեղին նայելով՝ և ենթակայ է, և «սեռի խնդիր», և սպարազայական խնդիր, և կոչական, — և այս խորթ չէ նրա համար: Իսկ մենք, մենք այդ ասանել չենք կարող. մենք պիտի ասենք՝ ուղղական՝ աշակերտ, կոչական՝ աշակերտ, հայցական աշակերտ: Մեզ համար հարկաւոր է հայցական հոլովը, որովհետև մեր հին լեզուն և ուրիշներն ունին այդպիսի հոլով: Մենք պիտի ասենք՝ ենթական ուղղական է, սեռի խնդիրը և սպարազայական խնդիրները՝ հայցական ևլն:

Անսովոր է հնչում, երբ ասենք «սեռի խնդիրն» և սպարազայական խնդիրները նոյնպէս ուղղական (ըստ իմաստով և ոչ անուանական) են գրւում: Բայց անսովորին կարելի է վարժուել: Մենք սովոր ենք, օրինակ, լսել որ սասրոգեալի յարաբերութիւնն արտայայտում է ուղղական հոլովով, կամ որ մի և նոյն է՝ սասրոգեալը գրւում է ուղղական հոլովով. ինչպէս՝ նա իմ աշակերտն էր: Շատ տարօրինակ կը հընչէք, եթէ ասէինք թէ սասրոգեալի անունը որոշ դէպքերում գրւում է դործիական հոլովով: Բայց ռուսի համար այդ ընաւ խորթ և տարօրինակ չէ, քանի որ նա ասում է՝ онъ былъ моимъ ученикомъ: Բացի այդ, յայտնի է՝ ռուսերէնի մէջ սեռի խնդիրը որոշ դէպքերում և որոշ ըայերի հետ զըրւում է սեռական հոլովով փոխանակ հայցականի՝ подай мнѣ бумагу и чернилъ. Не стану подробно описывать вамъ остальнаго путешествія. Отъ тебя я службы требую. Եւ ռուսն այդ սեռականները հայցական չի անուանում, որովհետև սեռի խնդիր են, և ոչ էլ դործիականներն՝ ուղղական, որովհետև սասրոգեալ են: Եւ եթէ այս ընական ենք գտնում, ինչո՞ւ նոյնպէս ընական չպիտի լինի այն, որ «սեռի խնդիրը» մեր արեւելեան աշխարհաբարում գրուի ուղղական կամ տրական հոլովով: Ի հարկէ ռուսի համար խորթ և սխալ է ասել я имѣю одна книга կամ я видѣлъ ему, ինչպէս հայն է ասում. բայց նոյնչափ և հայի համար խորթ և սխալ է ասել՝ նա իմ աշակերտով էր, փոխանակ՝ իմ աշակերտն էր, կամ ասուր ինձ թղթի և թանաքի. ես ձեզ չեմ նկարագրել մնացած ճանա-

ծելով հետ է իւրացնում ֆրանսերէն լեզուն: Բայց նա միանգամայն սովորում է, որ ֆրանսերէնում իսկապէս չկայ հոլովում:

պարհորդութեան. կամ՝ ես քեզնից ծառայութեան եմ պահանջում, — փոխանակ առելու Տուր ինձ թուղթ ու թանաք. ես ձեզ չեմ նկարագրել մնացած ճանապարհորդութիւնը. ես քեզնից ծառայութիւն եմ պահանջում: Ամեն լեզու իւր միջոցներն ունի ստեղծած շարահիւսական հատակցութիւն առաջ բերելու և դանազան յարաբերութիւններ արտայայտելու համար. լեզուներն մէջ նոյն շարահիւսական յարաբերութիւնները կան, բայց դրանց արտայայտութեան եղանակները յաճախ նոյն չեն. ուստի և ամեն լեզուի մէջ նոյն հոլովը, դիցուք գործիականը հայերէնի և ռուսերէնի մէջ, կառարելապէս իրար հաւասար չեն իրենց պաշտօնով: Ռուսերէնի գործիականը տեսանք, որ ստորոգեալ է գառնում, մի գործածութիւն, որ չունի հայերէնը. բայց հայերէնի գործիականն էլ իւր՝ տարբեր իմաստներով գործածութիւններն ունի, որ չունի ռուսերէնը. օրինակ՝ ինչ որ մենք ասում ենք՝ անտառով անցնել, և նմանները, ռուսն ասում է՝ идти черезъ лѣсъ: Այսպէս և դերմաներէնում շատ անականներն և բայերն խնդիրներ, ինչպէս և պարագայական խնդիրներ, զբոււմ են սեռական հոլովով. բայց հայերէնում այդպիսի բան չկայ: Նոյնպէս մեր բացառական և գործիական հոլովների իմաստը բոլորովին ուրիշ միջոցներով է արտայայտում գերմաներէնը, որ չունի այդ հոլովները: Ռուսերէնն ունի предложный — նախդրական հոլով, որ չունի հայերէնը:

Ոչ միայն տարբեր լեզուներ այս դանազանութիւնն ունին, այլ և մի և նոյն լեզուի մէջ հին և նոր լեզուն, միաժամանակ ապրող բարբառները յաճախ այս և սրա նման բաներով տարբերում են միմեանցից: Նրանք նոյն իմաստներն ու յարաբերութիւնները տարբեր ձևերով են արտայայտում: Գրաբարը չունի ներգոյական հոլով, մեր աշխարհաբարն ունի Թերթեցէք արևմտեան աշխարհաբարի քերականութիւնները և կը տեսնէք, որ այնտեղ էլ ներգոյական հոլով չկայ. և չկայ ոչ թէ նրա համար, որ մեր ներգոյականի իմաստը սրեւէ ձևով չի արտայայտում գրաբարում կամ արևմտեան աշխարհաբարում, այլ նրա համար, որ այդ իմաստն արտայայտելու համար առանձին ձև չկայ: Արևմտեան աշխարհաբարում, ինչպէս մեզ բառով, բայց և յաճախ ուղղական, սովորական ձևով ասենք, հայցական հոլովով է ասուում. ինչ որ մենք ասում ենք, օրինակ, նա բաղաւոր է բնակւում, նրանք ասում են՝ նա բաղաւր կը բնակի և շատ նմաններ: Եւ եթէ քերականութիւնները դնում են հայցական հոլով

գրելով՝ ուղղական քաղաք, կոչական քաղաք, հայցական քաղաք, պէտք է աւելացնէին և ներգոյական քաղաք: Բայց չեն աւելացնում ինչո՞ւ,— միայն նրա համար որ ներգոյականի ձև չկայ: Այլ բուռականնում են միայն շարահիւսութեան մէջ բացատրելով— (օրինակ Զ. Լ. Ասատուրի քերականութեան մէջ) թէ հայցական հոլովի գործածութիւններէց մէկն է և ներգոյականի իմաստով գործածուելը. «երբ տեղի մը մէջ դադարում կը ցուցնէ, և կը պատասխանէ ո՞ւր հարցման. ես տունը կը կենամ: Ափրիկէի անտառները զարհուրելի գազաններ կան» ևլն:

Հոլովական ձև, ուրեմն, և այս կամ այն հոլովի ցոյց տուած յարաբերութիւն, բոլորովին տարբեր բան են. եթէ այս վերջինը նկատի ունենայինք և միևնոյն ձևը տարբեր հոլովներ դնէինք, այն ժամանակ լեզուն, և ոչ միայն մեր լեզուն, շատ ու շատ հոլովներ կունենար, և ոչ թէ մի քանի: Հոլովը ձևի վրայ է հիմնուած. չկայ առանձին ձև, չկայ և առանձին հոլով: Մենք չունինք հայցականի համար առանձին ձև, չունինք ուրեմն և գրաբարի հայցական հոլովը: Դրա պաշտօնը որոշ դէպքերում ուղղականն է իւր վրայ առել, որոշ դէպքերում տրականը: Իսկ այդ դէպքերը որոշելը շարահիւսութեան գործ է:

Մի և նոյն հոլովը, կրկնում ենք, կարող է գործածուել զանազան շարահիւսական (սինտաքսիսական) յարաբերութիւններ ցոյց տալու համար. բայց այդ պատճառով մի հոլովը, մի ձևը, չի դադարում մի և նոյն հոլովը մնալուց և չի դառնում երկու, երեք և աւելի հոլովներ. ինչպէս օրինակ յունարէնում չկայ մեր և լատիներէնի բացառական հոլովի համապատասխան հոլով. մեր այս հոլովի պաշտօնը կատարում են այդ լեզուի մէջ սեռական կամ տրական հոլովները. բայց մի թէ սրա համար յունարէնում դնում են մի առանձին հոլով՝ բացառական և ասում թէ այդ հոլովը նման է սեռականին կամ տրականին, թէ՞ միայն սեռական ու տրական հոլով են դնում և ապա շարահիւսութեան մէջ բացատրում թէ սեռականն այս ու այս իմաստներով է գործածուում, տրականն՝ այս ու այս, և թէ այս երկու հոլովն ունին ի միջի այլոց և լատիներէնի բացառական հոլովի պաշտօնը: Եւ ինչո՞ւ պիտի մենք ուրեմն հայցական հոլով դնենք և ասենք նման է ուղղականին կամ տրականին և ոչ թէ շարահիւսութեան մէջ բացատրենք, թէ մեր ուղղականն և տրականը գործ են ածուում նաև ուրիշ լեզուներին և մեր գրաբարի հայցական հոլովի իմաստն արտայայտելու համար:

Եւ վերջապէս ստուգաբանօրէն ևս մեր աշխահաբարի

հայցական հոլով ասածը համապատասխան չէ գրաբարի հայցական հոլովին. տրականի նման հայցականը պարզապէս տրական է, իսկ ուղղականի նման հայցականը գրաբարի ուղղական հոլովն է և ոչ թէ հայցական: Այս շատ պարզ երևում է անեզական բառերի մէջ. Թագաւոր ոմն արար հարսանիս որդւոյ իւրում—հարսանիք տեց: Չայն ամենայն չարիս ետես թագաւորն —չարիք տեսաւ: Ժողովեաց զգօրս իւր—իւր զօրք ժողովեց: Եւ այսպէս բոլորը: Կը նշանակէ ներգործական բայերի սեռի խնդիր ասածը, որ գրաբարում հայցական հոլովով է գրում, աշխարհաբարում շուռ է եկել ուղղական հոլովի, որովհետև աշխարհաբարի հարսանիք, չարիք, զօրք ձևերը գրաբարում հայցական չեն, այլ ուղղական: Ուրեմն մեր հայցական «սեռի խնդիր» ասածը ստուգաբանօրէն ուղղական հոլով է: Նոյնպէս ուղղական հոլով են ստուգաբանօրէն, և ոչ հայցական, նաև պարագայական խնդիրները: Պալատանեանը գրում է. «հայցական հոլով պահանջում են շարժում ցոյց տուող բառերը իբրև պատասխան ուր հարցման»: Եւ ասկա աւելացնում է. «Այս հայցականը համապատասխանում է գրոց նախդրիւ տրականին. երբ ի տուն»: Գրաբարի նախդրիւ տրական ասածը ի նախդրով հայցական է. և հէնց այդ է պատճառը, որ այդ խնդիրները Պալատանեանը դնում է ոչ իբրև ուղղական, այլ հայցական: Սակայն՝ «եկայք ի հարսանիս—Հարսանիք եկէք»: Գնաց ի Միջագետս, ի Սիւնիս—Միջագետք, Սիւնիք: Եմուտ ի դժոխս—դժոխք մտաւ: Եմուտ յայս նորա—այքր մտաւ և շատ նմանների մէջ աշխարհաբարի հարսանիք, Միջագետք, Սիւնիք, դժոխք, այք ձևերը գրաբարում ի հարկէ նախդրիւ տրական—ի նախդրով հայցական չեն, այլ ուղղական: Այսպէս և ժամանակի տևողութեան, չափի ու քանակի, որակի կամ ձևի հայցական ասածներն աշխարհաբարում շուռ են եկել ուղղականի, ինչպէս՝ եղև սով զերիս ամս—երեք տարի: Գնաց ընդ նմա զերիս միղոնս—երեք մղոն ևլն: Այս ձևերից մի քանիսը գրաբարում արդէն երբեմն ուղղական են գրում, և գրաբարի հայցական հոլովի տեղ ուղղականի անցնելու սկիզբը ի հարկէ շատ հին է:

Այս ձևերը հայցական անունողները կաշկանդուած են գրաբարի քերականութեամբ: Այտնեանը, տեսանք, ստեղծում է «աննախդիր հոլովների» մի դրուածիւն. «Աննախդիր կը կոչենք այն հոլովներն՝ որ գրաբարի նախդիրը թողուցած են: Ասոնց մեծ մասը, առանց նախդրի ըլլալնուն, ոմանք ձիշդ ուղղականի կը նմանին և չեն ուղղական. ոմանք ալ տրականի և տրական չեն: Արդ՝ 1. Աննախդիր է հայցական հոլովը և ուղղականի

ձևով՝ քանի որ գ գիրը չունի. — Սա գիրքը կարդա՛» (—գգիրս): «Աննախոզիք տրական ուղղականի ձևով. — քանաւորի ձեռք ինկայ» (—ի ձեռս): «Աննախոզիք ներգոյական, ուղղականի ձևով. — եզբայրս Յուդասաց մնաց» (—ի Յուդասաց): «Աննախոզիք ներգոյական, տրականի ձևով. — Ասեցին շահաւա» (—ի ժամանակին): Ինչքան էլ մեծ է եղել Այսնեանի աղքեցութիւնը, Պալատանեանըն այս աննախոզիք հոլովները չի ընդունել. բայց նա էլ չի ազատուել գրաբարի ազդեցութիւնից: Նա Այսնեանի «տրականի ձևով աննախոզիք ներգոյականը», որովհետեւ գրաբարում տրական է ի նախորդով, գրել է աշխարհաբարում իբրև տրական հոլով, ինչպէս որ է իսկապէս. իսկ Այսնեանի «ուղղականի ձևով աննախոզիք հայցական, աննախոզիք ներգոյական» հոլովները, որովհետեւ գրաբարում հայցական կամ նախգրիւ տրական են, աշխարհաբարում գրել է իբրև հայցական <sup>1)</sup>: Այսպէս վարում է և Զ. Լ. Ասատուրը: Բայց այդ հայցական ասած հոլովներն «ուղղականի ձևով» են միշտ և, ինչպէս տեսանք, թէպէտ գործածութեամբ և իմաստով համապատասխան են (ոչ միշտ) գրաբարի հայցականին կամ նախգրիւ հայցականին (= նախգրիւ տրականին), ձևով սակայն համապատասխան են գրաբարի ուղղականին: Անշուշտ կարելի է գրաբարի, մասամբ և օտար լեզուների քերականութեան ուսման գիւրութեան համար ուղղականի այդ գործածութիւններն աշխարհաբարի քերականութեան մէջ դնել իբրև հայցական. բայց կարծում ենք աշխարհաբարի քերականութիւնը մեր աշխարհաբարի համար լինի և ոչ գրաբարի կամ օտար լեզուներէ: Եւ վերջապէս ի՞նչ օգուտ այդ հայցական հոլովից:

Դպրոցական կանոնագրութեան և Ծրագրի նախադիւրս կազմողները ուսուց լեզուի ծրագրի մէջ, եր. 74, անշուշտ փորձից օգտուելով ծանօթութիւն են դնում. «Յանկալի է, որ երեխաները որքան կարելի է շուտ սովորեն հայերէնի մէջ դանազանել տրականը հայցականից, որովհետեւ այդ հոլովների շփոթելը հայերէնի մէջ մեծ խոչընդոտ է հանդիսանում ուսուցիչի կանոնաւոր խօսելու համար»: Ռուսերէնի վարժապետներն ի հարկէ շատ անգամ են լսել հայ աշակերտների բերանից այսպիսի խօսքեր՝ я видѣлъ ему: Բայց աշակերտներն ի՞նչպէս «շուտ

1) Պալատանեանն այնքան սիրահար է հայցականի, որ հայցական հոլովով խնդիրների մէջ է դնում եւ այսպիսիները. «Մենք Հայկի անունով կոչում ենք հայ», «Ապն աւելի մեծ է քան բաղը», որ պարզապէս սխալ են:

սովորեն զանազանել արականը հայցականից», կամ աւելի ճիշտ, ինչպէս շուտ սովորեն իմանալ թէ ո՞րն է հայերէնում հայցական հոլովը,— այս չեն ասում ծրագիր կազմողները: Եւ ինչո՞ւ չեն շուտ սովորում: Ա՞ն որ փոքր հասակից արդէն նրանք կրկնում են ուղղական՝ մարդ, հայցական մարդ. կամ արական մարդուն, հայցական մարդուն: Արդեօք աւելորդ աշխատանք չեն անում այդ կրկնութիւններով, եթէ վերջիվերջոյ այդ կերպով չեն կարողանում և չեն էլ կարող զանազանել հայցականը արականից, և ոչ էլ ուղղականից: Ինչո՞ւ փոքրահասակ աշակերտն անգամ շատ շուտով վարժւում է զանազանել բացառական, գործիական և ներգոյական հոլովները, իսկ նոյն աշակերտը, աւելի մեծ հասակում անգամ, շարունակ շիտթում է հայցական և տրական, կամ հայցական և ուղղական, կամ սեռական և տրական հոլովները: Շատ հասկանալի է թէ ինչո՞ւ: Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կան մեր լեզուի մէջ, դրանք ունին իրենց յատուկ ձևերը՝ flexion ը՝ ից, ով, ուն վերջաւորութիւններով. իսկ հայցական հոլով ասածը միշտ նման է կամ ուղղականին կամ տրականին: Իսկ սեռականն ու տրականը նման են իրար: Արպէս զի աշակերտը սովորի հայցական հոլովը, ինչպէս և սեռական ու տրական հոլովները տարբերել, նա ոչ թէ հոլովել պիտի սովորի, այլ հոլովների՝ խօսքի մէջ կատարած պաշտօնը: Գոնէ այս է ասում մեր առաջին քերական Պալատանեանը: Իսկ հոլով և հոլովի պաշտօն կամ հոլովի արտայայտած յարաբերութիւն, տեսանք, դրանք բոլորովին տարբեր բան են:

Փոքրահասակ աշակերտն էլ շուտ սովորում է հոլովել, բայց հոլովների շարահիւստութիւնը, բառերի՝ հոլովներով կապակցութեան յարաբերութիւնը, այդ ըմբռնելը փոքրների գործ չէ: Դա պահանջում է քիչ ու շատ հասուն տարիք: Արովհետև ուղղականը հայցականից տարբերելու համար աշակերտը պէտք է իմանայ նախ թէ հայցական է այն ուղղականի ձևով անունը, որ ոչ ենթակայ է, ոչ ստորոգեալ, ոչ վերագիր, ոչ կոչական. և ապա դարձեալ ուղղականը և «տրականը հայցականից զանազանելու» համար նա պիտի ըմբռնի բայերի սեռը. նա պիտի զանազանի անցողական (transitif) և անանցողական (intransitif) բայերը: Իսկ դրա համար նա պիտի ջոկի բայերի առարկայական և պարագայական խնդիրները և ապա պիտի հասկանայ, որ առարկայական խնդիրների մէջ կայ մէկը, որ կրող առարկայ է, իւր վրայ կրում է ենթակայի գործողութիւնը: Իսկ կրող առարկան ըմբռնելու համար, պէտք է կարողա-

նայ անցողական բայով ասած խօսքը անանցողական ձևի վերածեւ—Խեղճ մարդուն զուր տեղը տանջեցին,—խեղճ մարդը զուր տեղը տանջուեց,—նրան տուն վերադարձրին,—նա տուն վերադարձաւ,—պատր քանդեցին,—պատր քանդուեց,—որպէս զի կարողանայ տեսնել թէ ինչպէս այդ կողմ առարկայ ցոյց տուող խնդիրը շուռ տուած ձևով միշտ դառնում է ենթակայ: Եւ ապա նոր, այս բոլոր բարդ վարժութիւնները անելուց յետոյ, աշակերտը պիտի սովորի «զանազանել հայցականը արականից» կամ ուղղականից: Նա նոր պիտի դիտի ընկնի, որ հէնց այդ ենթակայի փոխուող խնդիրն է, որ մենք հայցական հոլով ենք ասում, որ միշտ նման է ուղղականին կամ արականին, և թէ այդ խնդիրն է որ ռուսերէնում դրւում է ВИДИТЕЛЬНЫЙ հոլովով: Բայց ի՞նչ աներեոյթ և անտեսանելի հոլով է այդ հայցականը, որ այսպիսի դժուարութիւններով պիտի երևան դայ:

Եւ երբ հայցական հոլովը տրականից և ուղղականից տարբերելու համար այդ ամենը սովորեցնում ենք, արդեօք հոլովէլ ենք սովորեցնում, թէ՞ շարահիւսութիւն: Կայ արդեօք ուրիշ միջոց «տրականը հայցականից դանազանելու» համար, բացի այսպէս շարահիւսութեանը դիմելուց: Պաշտանեանի հետ մենք ևս ուրիշը չգիտենք: Ուստի այս նպատակի համար, ռուսերէնի վարժապետների այս պահանջին բաւականութիւն տալու համար հէնց, մենք մեր «ճարտական քերականութեան» մէջ մտքերէլ ենք այդ վարժութիւնները «Բայերի սեռը և ուղիղ լսընդիր» վերնագրի տակ: Եթէ կը հասկանան աշակերտները, թող այդ գլուխը «որքան կարելի է շուտ սովորեն տրականը հայցականից դանազանելու» համար՝ որովհետեւ, կրկնում ենք, մինչև այս չհասկանայ աշակերտը, մինչև նա դիտակցօրէն չըմբռնի հոլովների շարահիւսական արժէքը, ինչքան էլ նա սերտի ուղղական մարդ, հայց. մարդ, կամ տրական նրան, հայց. նրան, միշտ էլ կասի՝ Я ВИДѢЛЬ ЕМУ, քանի որ հայերէնում՝ ես տեսայ նրան է ասում և ոչ թէ տեսայ զնա: Ե. և նոյն իսկ Զ. դասարանցիների գրաբար գրածների մէջ անգամ պատահել է մեզ կարգալ ես տեսի նմա խօսքի նման սխալ կազմութիւններ:

Այսպէս է, չկայ հայցականը:

Մ. Արեղիան.

